«Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ
Հասցե. Լոռու մարզ. ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374)(77) 34-37-45

Ուղղակի Ժողովրդավարություն

"Direct democracy" NGO for consolidation democratic institutions NGO
Address: Lori Region, Vanadzor Tigran Mec 47/13-1
Tel. (+374) (77) 34-37-45

ՀՀ Լոռու մարզպետ Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

2023 թվականի ապրիլի 08-ին վանաձոր համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրվել է Վանաձոր համայնքի ավագանու 14.12.2022թ. թիվ 11 որոշումը ուժը կորցրած ճանաչելու հարցը: Որոշումը չի ընդունվել ավագանու կողմից:

Վանաձոր համայնքի ավագանու 14.12.2022թ. թիվ 11 որոշմամբ Վանաձոր համայնքին պատկանող հողամասը, որի կադաստրային արժեքը կրկնակի բարձր է Նելլի Ղամբարյանին նախկինում պատկանող հողամասի արժեքից, փոխանակվել է դրա հետ՝ առանց Նելլի Ղամբարյանի կողմից հավելյալ գումար վճարելու:

Վերլուծելով իրավիճակը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եկել է եզրակացության, որ Սեյրան Ղամբարյանի կողմից որոշման քվեարկությանը մասնակցելը շահերի բախման վերաբերյալ կարգավորումների խախտում է:

2024 թվական ապրիլի 08-ի ավագանու նիստի օրակարգում հարցն ընդգրկվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՏԿԵ նախարարության և Լոռու մարզպետի գրությունների հիման վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններն իրավասու են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ փոփոխելու առաջարկով որոշումը մարզպետարան մուտքագրվելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, դիմելու համապատասխանաբար համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին:

Նույն հոդվածի 3-րդ ամսի համաձայն՝ Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տեղական ինքնակառավարման մարմինը չի փոփոխում կամ վերացնում իր որոշումը և այդ մասին

տեղեկացնում դիմումը ներկայացրած մարմնին, ապա դիմումը ներկայացրած հսկողություն իրականացնող մարմինը հայց է ներկայացնում դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ խնդրում ենք տեղեկություն տրամադրել, թե ի՞նչ գործողություններ եք նախատեսում իրականացնել այս որոշմ,ան կամապցությամբ, մասնավորապես՝ արդյո՞ք դիմելու եք դատարան՝ որոշումը դատական կարգով վերացնելու համար:

Ծանուցում. սույն գրությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքի վրա, իսկ պատասխանն ակնկալվում է ստանալ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված 5-օրյա ժամկետում:

Հարգանքով՝
ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան
08.04.2024թ.